ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Էստոնիայի (ք. Տալլին) և Ֆինլանդիայի (ք. Հելսինկի) Հանրապետություններ գործուղման (ռազմավարական պլանավորման թեմայով ուսուցողական այցի) արդյունքների մասին

1	**Անուն, ազգանուն**	Շուշաննա Թևանյան
2	**Զբաղեցրած պաշտոն**	Կառուցվածքային ստորաբաժանումների առանձին գործառույթներ համակարգող խորհրդական
3	**Գործուղման վայր և ժամկետներ**	• **Էստոնիայի Հանրապետություն**, ք. Տալլին. 2023թ. մայիսի 29-31 • **Ֆինլանդիայի Հանրապետություն**, ք. Հելսինկի. 2023թ. հունիսի 1-3
4	**Հրավիրող կողմ**	Համաշխարհային բանկ
5	**Գործուղման նպատակ**	1. Օգտակար տեղեկատվություն քաղել նշված երկու երկրներում ռազմավարական պլանավորման (strategic planning) և կառավարման (strategic management) փորձառության մասին՝ ՀՀ Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության առաջին՝ «Քաղաքականության պլանավորման և իրականացման իրատեսական, արդյունքամետ և հաշվետու համակարգի կայացում» ենթանպատակի ներքո պլանավորվող գործողություններում կիրառելու համար. 2. Վարչապետի աշխատակազմի և ընտրված երեք նախարարությունների՝ ռազմավարական պլանավորման համար պատասխանատու անձանց համագործակցության ձևաչափ ստեղծել՝ փորձի և գիտելիքի պարբերական փոխանակման և աշխատանքների առավել արդյունավետ համակարգման համար. 3. Հայկական պատվիրակության, Էստոնիայի Հանրապետության և Ֆինլանդիայի Հանրապետության համապատասխան պետական մարմինների ներկայացուցիչների ոչ ֆորմալ շփման ցանց ձևավորել՝ փորձի և գիտելիքի փոխանակման համար:
6	**Քննարկված թեմաները**	**Էստոնիայի Հանրապետություն.** • Երկարաժամկետ զարգացման «Էստոնիա-2035» ռազմավարության մշակման և ընդունման գործընթաց

		• Ռազմավարական գործընթացների շրջանակը որպես ծրագրային բյուջետավորման մաս • Բյուջեի և Կառավարության ծրագրի միջև կապեր • Կառավարության ծրագրի և ռազմավարական փաստաթղթերի կատարողականի մշտադիտարկման էլ. համակարգ («Ճշմարտության ծառ») • Վարչապետի աշխատակազմի դերը և գործառույթները ռազմավարական պլանավորման համատեքստում • Ֆինանսների նախարարության և ճյուղային նախարարությունների միջև համագործակցության ձևաչափեր • Ռազմավարական գործընթացներում քաղծառայողների և քաղաքական գործիչների համագործակցության ձևաչափեր • Ռազմավարական գործընթացներում շահագրգիռ կողմերին (ներառյալ՝ հանրությանը) արդյունավետ կերպով ներգրավելու միջոցներ • Ծրագրային բյուջետավորման համակարգի ներդնման հիմնական խոչընդոտներ և առավելություններ. մշտադիտարկում և հաշվետվողականություն • Բյուջեի պլանավորման և ռազմավարական փաստաթղթերի ներդաշնակեցում • Ֆինանսական կառավարման ինտեգրված էլ. համակարգեր • Թվայնացման գործընթացները պետական հատվածում **Ֆինլանդիայի Հանրապետություն** • Ռազմավարական պլանավորման համակարգի կայացման գործընթաց • Ռազմավարությունների աստիճանակարգություն և «ռազմավարությունների ջունգլի» խնդիր • Կառավարության ծրագրի մշտադիտարկման և հաշվետվողականության մեխանիզմներ • Ապագայամետ հետազոտությունների և իրավիճակի պարբերական գնահատման մշակույթ • Ծրագրերի փորձարկման (էքսպերիմենտացիայի) մշակույթ և ռիսկերի գնահատում • Վստահության և նորամուծությունների մշակույթ ռազմավարական գործընթացներում

		• Սոցիալական և առողջապահության ոլորտում ռազմավարական պլանավորման և բյուջետային գործընթացների ներդաշնակեցում • Կառավարության ծրագիրը՝ որպես առաջնորդող փաստաթուղթ, սոցիալական և առողջապահության ոլորտում ռազմավարական փաստաթղթերի և ֆինանսական պլանավորման համար • Փաստահենք և գիտելիքահենք քաղաքականությունների մշակում
7	**Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**	**Հանդիպումներ են կայացել.** **Էստոնիայի Հանրապետության՝** - Վարչապետի աշխատակազմի Ռազմավարական գործընթացների համակարգման վարչության հետ - Ֆինանսների նախարարության հետ - Պետական հատվածին թվայնացման ծառայություններ տրամադրող «E-Estonia» ընկերության հետ **Ֆինլանդիայի Հանրապետության՝** - Վարչապետի աշխատակազմի Ռազմավարական գործընթացների համակարգման վարչության հետ - Ֆինանսների նախարարության Հանրային կառավարման վարչության հետ - Սոցիալական հարցերի և առողջապահության նախարարության Ռազմավարական գործընթացների համակարգման վարչության հետ - Պետական հատվածի հետ համագործակցող «Demos-Helsinki» քաղաքականությունների մշակման և հետազոտական ինստիտուտի հետ **Քննարկված մասնագիտական հարցերի և թեմաների առավել մանրամասն վերլուծությունները կներկայացվի քիչ ուշ, երբ Համաշխարհային բանկի կողմից փոխանցվեն անհրաժեշտ բոլոր նյութերը:*
8	**Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները,**	**Կայացվել է պայմանավորվածություն, որ՝**

	պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.	- Համաշխարհային բանկը պետք է հայկական պատվիրակությանը փաթեթով **փոխանցի ուսումնական այցի ժամանակ հղում արված բոլոր նյութերը և արտասահմանյան գործընկերների կոնտակտային տվյալները.** - Պատվիրակության մաս կազմող ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը **գործողությունների ուղղություններ պետք է առաջարկի**, որոնք որպես պիլոտ կիրականացվեն Համաշխարհային բանկի աջակցությամբ և երկրում ռազմավարական պլանավորման բարեփոխումները համակարգող փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի գրասենյակի համակարգմամբ:
9	**Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**	**Պիլոտի իրականացման համատեքստում.** - **Առաջիկա երկու շաբաթների ընթացքում** Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (պատասխանատու՝ Շուշաննա Թևանյան) պետք է փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի գրասենյակի հետ քննարկի պիլոտի իրականացման նպատակահարմարությունը «Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության» համատեքստում. - Դրական որոշման դեպքում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (պատասխանատու՝ Շուշաննա Թևանյան) **հունիսի 23-30-ն** ընկած ժամանակահատվածում պետք է Համաշխարհային բանկի գործընկերներին փոխանցի պիլոտի առաջարկը, որից հետո կարող է հստակեցվել դրա իրականացման ժամանակացույցը:
10	**Ստորագրությունը, ամսաթիվը**	**07.06.2023թ.**